ԻՆՉՊԵ՞Ս ՎԵՐԱՑՆԵԼ ՎԱՏ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

«...իրենք ապականության ծառաներ են, որովհետև ինչից մեկը հաղթվի, նրան էլ ծառայում է:» Բ Պետրոս 2:19

Ինչպես վատ սովորությունից ազատվել

1. Սկսիր այսօր

«Մի՛ պարծենա վաղվա օրով, որովհետև չգիտես, թե օրն ինչ կծնի:» Առակաց 27:1

«Քամուն դիտողը չի ցանի, և ամպերին նայողը չի հնձի:» Ժողովող 11:4

2. Հրաժարվիր ուրիշներին մեղադրելուց

«Մարդու հիմարությունը կործանում է նրա ճանապարհը, և նրա սիրտը մոլեգնում է Տիրոջ դեմ:» Առակաց 19:3

3. Քննիր քո կ՛անքը

«Քննենք մեր ճանապարհները և փորձենք ու ետ դառնանք Տիրոջը:» Երեմիայի Ողբերը 3:40

«Ցերեկ ու գիշեր քո ձեռքը ծանրանում էր ինձ վրա... Ես մեղքս հայտնեցի քեզ և չծածկեցի անօրենությունս. ասացի. "Օրինազանցությունս խոստովանեմ Տիրոջը". և դու թողեցիր իմ մեղքի անօրենությունը:» Սաղմոս 32:4-5

4. Խնդրիր Քրիստոսից կառավարել քո կյանքը

«Թող մեղքը ձեր մահկանացու մարմնի մեջ չթագավորի, որ նրա ցանկություններին չհնազանդվեք...ինքներդ ձեզ ներկայացրե՛ք Աստծուն՝ որպես...արդարության զենք՝ Աստծուն:» Հռովմայեցիս 6:12-13

5. Հեռու մնա փորձությունից

«...մարմնի մասին մի՛ հոգացեք ցանկությունը բավարարելու համար:» Հռովմայեցիս 13:14

«Հարթի՛ր քո ոտքերի ուղին...ոտքդ հեռացրո՛ւ չարից:» Առակաց 4:26-27

6. Կենտրոնացիր ավելի դրականի վրա

«Ամենից ավելի քո սի՛րտը պահիր զգուշությամբ, որովհետև նրանից է կյանքի աղբյուրը:» Առակաց 4:23

«Ինչ որ ճշմարիտ է, ինչ որ պարկեշտ, ինչ որ արդար, ինչ որ անարատ, ինչ որ սիրելի, ինչ որ բարեհամբավ, առաքինի և գովելի, ա՛յն մտածեք:» Փիլիպպեցիս 4:8

7. Վերականգնիր խզված հարաբերությունները

«Եթե հնարավոր է, որքան ձեզանից է կախված, բոլոր մարդկանց հետ խաղաղությա՛մբ մնացեք:» Հռովմայեցիս 12:18

8. Օգնություն ուզեցիր

«Երկուսը մեկից լավ է...եթե վայր ընկնեն, մեկն իր ընկերոջը կկանգնեցնի. բայց վա՛յ մեկին, որ ընկնում է, և չկա մի երկրորդը, որ կանգնեցնի նրան:» Ժողովող 4:9-10

«Միմյանց խոստովանե՛ք ձեր մեղքերը և միմյանց համար աղոթե՛ք, որ բժշկվեք:» Հակոբոս 5:16

9. Պատրաստ եղիր ուրիշներին օգնելու համար

«Աստված մեր բոլոր նեղությունների մեջ մխիթարում է մեզ, որպեսզի մենք էլ կարողանանք մխիթարել նրանց, ովքեր ամեն տեսակ նեղության մեջ են, ա՛յն մխիթարությամբ, որով մենք մխիթարվում ենք Աստծուց:» Բ Կորնթացիս 1:4

«Եղբայրնե՛ր, եթե որևէ մեկը հանկարծ ինչ-որ հանցանքի մեջ բռնվի, դուք, որ հոգևոր եք, այդպիսի մեկին հեզության հոգով ուղղե՛ք: Ինքներդ էլ զգուշացե՛ք, որ դուք էլ չփորձվեք: Միմյանց բեռը կրե՛ք և այսպես Քրիստոսի օրենքը կատարե՛ք:» Գաղատացիս 6:1-2

«Ձեզ ուրիշ փորձություն չի պատահել, բացի մարդկային փորձությունից: Բայց Աստված հավատարիմ է. նա ձեզ չի թողնի ձեր կարողությունից առավել փորձվելու, այլ փորձության հետ ելքն էլ կպատրաստի, որ կարողանաք դիմանալ:» Ա Կորնթացիս 10:13